

1843-1894

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆՆՈՒՄԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐ ԾԳՈՍՏԱՍ

Հ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք

Պ Լ Գ - ԼՈՒՍԱՌԻՄՐԱՅ ՊԱՇՏՈՆ.

(Տես յէջ 289)

Պ. ԵՂԱՆԱԿՔ. — Լուսարաց պէտքն կամ քործն օտուգութեամբ երկու բանի համար սահմանեցաւ յԱտուծոյ, կ'ըսեն Ս. Գիրք. մէկ մի, « Ի Լուսարութիւն ի վերայ երկրի, և մեկնել ի մէջ տունջեան և գիշերոյ » . մէկ մ'այլ, զի « եղիցին ի նշանս և ի ժառ » մանակս, և յաւարս և ի տարիս » : Ուղղահաւատ և ծոհահատտ՝ ամենքն այլ այսպէս ընդունած և ըրած են, աւելի կամ պակաս քննութեամբ և գիտութեամբ. հասարակօրէն Արեգակամբ չափելով զտարին, Լուսնով՝ զամիսս, Առտեղօք՝ գիշերուան ժամերը կամ պահերը, երբ երկրիս Թաւալմամբ՝ անոնք Չերնիթէն կամ զազաթնակիսէն քիչ քիչ զէս ի հորիզոն խոնարած երեւնան : Այս զնոսութիւններէն հետեւած լուսարաց պաշտօնը յիշեցինք. մնայր մեզ գիտնալ՝ թէ արդիօք ստոնց աւերելոյթ շարժմանց տեւողութիւնն, որ է Ժամանակն և իր մասերն այլ, պաշտած են Հայք, ինչպէս Յոյք կոսմոս մի ունէին շատուած ժամանակի, Պարսիք կամ Չանդիկը՝ զՉրուան, նոյնպէս և զԱմիսս : — Այս բանիս յայտնի նշան մի չկայ առ մեզայինս, և ոչ այլ տարւոյ շորս Եղանակաց պաշտօն կամ անձնաւորութիւն, ինչպէս զըտուին առ բազմաստուած Յոյնս. բայց որչափ

այլ այս տարւոյ բաժիններու անուանք զիւցական երեւոյթ մի շունին, և ձայնի՝ կարելի է քանի մի նմանութիւն պսնել յօտար լեզուս, զարձեալ զիտելի բան մ'է՝ երկու բարեխառն եղանակաց՝ հայերէն անուանց զոյգ վերջաւանցն, Գարուն և Աշուն. նոյնպէս այլ երկու բարկ եղանակացն՝ Ամառ և Չմեռն¹. պատահաբար շին կարելի այսպիսի կոչմունք, ինչամտութեամբ հնարուած երեւին. զոր թողումք պարզել հնարագիտաց և բանասիրաց բաղդատելով օտար ազգաց և լեզուաց անուանց : Մեր հանդիպածն է (եթէ ուղիղ զրուած և կարգացուած են), Աշնան՝ Ոչմեռն կոչուիլն ի հին հնդկի՝ սանսկրիտ լեզու,² և աւելի նմանութեամբք՝ ի զանդիկն՝ Չմեռն³ կոչուի Չհմա, իսկ անձնաւորեալն

1. Վանական վ. բառից պարզ ձայնին միտ զննելով՝ կ'ուզէ ստուգարանել. « Գարունն՝ որ » գայ ի յարուսն. Ամառն այս է՝ որ յանօթ առ » նոս. Աշունն՝ որ անչոյնին. Չմեռն՝ որ ձիւնս » մեռ լինին » :
2. Ուրիշ տեղ կարգացինք՝ որ ի սանսկ. Ոչմեռն՝ ամառ նշանակէ : Ոչ՝ այրել :
3. Կրնանք յիշել և այսօր արտադրեալն այլ Ոչմեռն. որ ի զանդիկն կոչի Իսի, գերման Eis, և այլն :

կամ պաշտեցեալ ոգին կամ դեւն՝ Իրմակա-
յայտ է որ առ մեզ Իրմակ կոչուի հրահա-
կողմն, խոնար և շուք տեղուանք, ուր գուցէ
և Հայն ուներ պաշտելի կամ խորելի ոգի
մի. այս եղանակին անունն և բերքն՝ (Ձիւն)
շատ օտար ազգաց մէջ լսուի մերձաւորապէս
համեմայն. Յուն. Χειμων, Լ. Hiems, Hi-
bernus. Սանսկ. Հիւսն Չմեուն¹. Թ. Xiaw =
Ձիւն. Հնդկաստանի Գեաֆիրք՝ Չիւս ասեն
ձեան, Չոյն զՉմեուն. Չանդիկք Չիւսո զձիւն.
Ալանք՝ Սիւեկն՝ զձմեուն Սմաուն՝ Համա կոչուի
ի զանդիկն. և զարմանայի հակադրութեամբ՝
Sommer գերմ. և Summer անգլ. ամառ
նշանակեն, մինչ ձայնիւ մօտ են Չմեունն² .
Գիցական պաշտաման թողումք յիշել Հայոց
Նոր տարւոյ տօնը, որ կէս մի քաղաքա-
կան հանդէս էր, կէս մ'այլ կրօնական :

Տարւոյ եղանակաց չորս բաժանման պէս՝
ամսոցն այլ ի 12 բաժնուիլն՝ հասարակ է
գրեթէ ամէն քիչ շատ քաղաքակիրթ ազ-
գաց, պէսպէս թուով օրերուն և անելին ու
պակար լրացընելու կերպերով, որ տօմա-
բազմաութեան պատշաճի պարզել : Մեր հի-
մայ զօրծածած Տօմարից կամ Օրացուցից
մէջ այլ կու յիշեմք Հայկական ամսոց ա-
նուանքն, և ամենուն ծանօթ են. բայց ա-
նոց ծագումն ոչ նոյնպէս. և ոչ այլ ի սկզբ-
բան ամենքն այլ այս անուններն ըլլալ ե-
րեւին, այլ փոփոխութիւնք և խառնուրդք ե-
ղած, որով և անման իմաստիք. բայց մեր
խնդիրն կրօնական հաւատոց վրայ ըլլալով՝
այսոր նշանն ունեցողները կ'ուզեմք զատել, և
մէկայլներն եւս առ հարկէ յիշել : — Մեր
միջին դարոց վարդապետք ոմանք շատ գիւ-
րամտութեամբ, գուցէ և Հայկայ շատ պա-
տուարութեամբ՝ բոքր են, թէ այդ 12 ա-
նուանքն իր 12 որդոց և դասերաց անուանքն
էին. մինչ ծանօթագոյն որդւոցն՝ (Սրմենակայ և
այլոց), անուանք չկան անոնց մէջ, կարիքի է

որ մի քանին յատուկ անձանց և դիցազանց
անուանք են, բայց այլք եղանակաց պատ-
շաճին : — Առաջինն Նաաաարդ, որ երկու
կերպ տարեգրուի զնելով, բնական և քա-
ղաքական, ըստ յեանդոս՝ այժմու օգոստոս
ամսոյ մէջ սկսի, ըստ առաջնոյն՝ ի մարտի
հասարակածին կամ ի զարնանամբոսի. և այն
ասին ամսոց շարքն այլ շրջելով Արեգ կ'ըլ-
լայ (և պատշաճապէս) տարւոյ առաջին ամիսն
Նաաաարդի անուան պէսպէս անյարմար պտու-
գաբանութիւնք եղած են ըստ հայերէն լե-
զուի. շատ հաւանականն է հին հնդկականէն
ծագումն, Նաաաաարդա, Նար տարի կամ
նոր շար նշանակելով : Երկրորդ և երրորդ ա-
միսք՝ շատ օտար հանդիպութեամբ վրաց լե-
զուի երկու և երեք թիւերը նշանակեն, որ
որպիսի այլ ամսոց թուակարգին յարմար է՝
այնքան խորթ և սննդոտներ ի Հայ հոգ-
ւոյ, որ կրնար հակաաւորէն ըսել՝ թէ իր
երկրորդ և երրորդ ամսոց անուանքը՝ Վիրք ի-
րենց թուահամար ըրեր են : Երկրորդ ամիս
մեր Հոռի՝ ըստ վերոյիշեալ վարդապետաց՝
Հայկայ դատեր մի տունն է : Լաւաբոյն չէր
ըսել իր ծանօթ խոս սրբւոյն, և երգպտու-
կան Հօրի (որ և Orus) պէս պատուել. թէ
և յիշուի և առ յունալատինս Հորա դիցուհի
գեղեցկութեան, (յորոց չէ հեռի և խորոտիկ
կոչումն առ մեզ՝ գեղեցկի նշանակութեամբ),
թողումք և պարսկերէն արեւու նշանակու-
թիւնն այս անուան : Ոմանք այլ ի մեր վար-
դապետաց Հոր և Հորեկ ստուգաբանեն. այս
ինքն այն ամսուն՝ ցարենը և նմանիքը հա-
րերու մէջ ժողովելն և պահելն, ըստ ուղի-
րութեան հին ժամանակի, նա եւ ներկայիս³ :

3. Աւելի նորայտը բան մի գրուած է Յովհ-
Եղնկացոյ անուամբ հաւաքուած Տօմարպատ-
ճառի մէջ. « Այր ոմն Վրաստան ամիս՝ ի Հոռի
» փոխարկեաց, որդւոյն իւրոյ խոռէն կոչելով,
» յաղագս ընչաւէտութեանն իւրոյ՝ աղբրսեաց
» զամենեւեան, յետ մեռանելոյ որդւոյն իւրոյ՝
» յիշատակելով զանուն նորա՝ ձեռն ամեանն,
» որպէս Յուրիս և Օղոստոս՝ ձեռն անուանցն՝
» և Թագաւորքն յիշատակին », և այլն : Այս
պատճառու այլ կ'ըսէ Աշխարհաւարդան կոչե-
ցաւ Չատկի Գ. Կիրակիի տօնն, որ Հոռի ամսոյ
սկզբան գրուած էր :

1. Իւլանտացիք այլ կոչեն Grimbre.
2. Բանասէր մի (Pietet) Աման և Չմեան
անունները նման զանելով յայլեւայլ լեզուս, իսկ
Աչնան՝ տարբեր, հետեցընէ՝ թէ ի սկզբան ե-
րեք եղանակ որոշէին տարւոյ. յետոյ անելաւ
Աշունն :

Երրորդ ամիսն Ստեփ կամ Սահիկ և Սահեկի, նոյնպէս դուտոր Հայկայ համարուած, անյարմար չէ իզական սահուն անուան, և նմանի Նոյեմբ երբայակահին. ունին և Յոյնք յաւերժանարս մի Սաճիա անուամբ, դուտոր Մէանդր գետոյ: — Չորրորդ ամիսն Տրե՛ որ Հայկայ որդոց կարգէն կ'ըտի, շատ հուանօրէն յայտնէ զՏիր շատուած, որ պիտի յիշուի ի կարգի իր նմանեաց: — Հինգերորդ ամիսն Քաղոց՝ որ ըստ Հայկայ ազգաբանութեան՝ իր մէկ որդոյն անուամբ է, ըստ ոմանց Քաղ արու այժ նշանակէ, իր տաքութեան ամսոյն յարմարելով (աւարոյ վերջերը). պատշաճագոյն է՝ ըստ այլոց՝ այգեաց և արտից քաղ բնելուն: — Արեաց, վիցերորդ ամիսն այլ Հայկայ որդի համարուած է, այլ ոչ յարմարած: — Եօթներորդն՝ Մեհեկ կամ Մեհեկի կամ Մեհեկան, զտեք անուն, չէ անյարմար. բայց յիշեցընէ զՄարիկ յսփինն, և այլ Մեհ կամ Ման կոչուած գիցական անձինք, ինչպէս և առ մեզ Մահեաւ, Մեհեղակ և այլն: — Ութերորդն Արեց այլ՝ ի դասերաց էր. անունն յայտնէ զԱրեգակն, մանաւանդ՝ որ ըստ վերոյգրելոյս՝ այն ամսոյն մէջ արեգակն իր նոր շրջանը սփիչ համարուի՝ ի դարնամբարտի: — Իններորդն Անի կամ Անեկան ոչ յորդոց կարգէն համարուէր և ոչ ի դասերաց. ինչ նշանակելն և երբ ամսակարգի մանին այլ անյայտ, որովհետեւ ամսարագիրք կ'ըսեն, թէ այսոր տեղ առաջ Հարուանց կոչուէր ամիսն, և այս նշանակէր երկրագործական բան մի, ինչպէս խոտ ճարել: — Ժ. Մարերի՝ ի դասերաց էր, անունն յարմար է իզականի, բայց արիական Մարկաց ձայնն ալ յիշեցընէ տայ հեռուանց: — ԺԱ. Մարգագ. այսոր համար վկայեն ամսարագիրք, ինչպէս Անեկի, թէ « ի գործոց առին զանուանս ». այսինքն, նոյն ամսոյն մէջ մարգերու վաշտերու խոտերով ծաղկներով զարդարուելուն համար, կամ զանոնք հնձելու, և այլ այսպիսի մշակական գործոց: — ԺԲ. վերջին ամիսն որ կոչի Հրատից կամ Հրորտից՝ Հայկայ արու զակաց զասէն համարուէր. ըստ ոմանց այն ամսուն տարութեան համար այսպէս հրոյ անուամբ յորդուած է: Պարտից և Պարթեւաց

մէջ այսոր նման յատուկ անձանց անուանք կան, զոցէ նոյն ըլլայ և Փրաւորոսն, զի Հայք անոնց Ֆ (Pl) տաւն ի Հ փոխեն. Յունաց մէջ ալ (ի Գեղիկիս) կար Հերոյից կոչուած ասն մի, բայց իրենց մէկ Հերով անուանեալ գիցագիտուէ՛ թէ այլ պատճառաւ, ինձ չէ յայտ: Հնդկիք այլ երբեմն իրենց մեծ Սիւա շատուածը Բոստրա կոչեն. Գերմանացիք այլ Hrod, Hrudro, Hrede կոչելին իրենց մէկ շատուածը. Փռանկաց Ռոտէզ (Rodez) քաղաքն այլ իրենց Roth կամ Ruth գից անուամբ կոչուած է: — Հայոց ամիսք ամենն այլ ՅՕական օրով էին, ինչպէս այլոց ոմանց, և հարկ էր տարւոյն (Յ65)՝ օրերու մնացորդ հինգն այլ՝ լրացընել յաւելուածով մի, որ և կոչի Անիեաց. այս հինգ օրերն կոչուէին առանձին հին անուամբք հինգ մուրակացն, Լուծ, Եղջերու, և այլն: Աւելեաց աւուարց անուանք հարցընել կուտան՝ թէ հապա ամբողջ ամսոց օրերն այլ իրենց յատուկ անուններ չունէին, և միոյ միոյ պահպան ողիք չկային, ինչպէս Չանդկաց կրօնքն ունին: — Անհաւանելի չէ. նա և, թէպէտ ի մեր ձեռք եկած գրոց մէջ չեմք դուած, բայց ուրիշ ոմանք գտած են կ'ըսեն, և հրատարակած՝ և են ասոնք, յարմար և անյարմար.

- 1 Արեգ
- 2 Հրանց (իբր հրախաւս հող)
- 3 Արամ
- 4 Մարգար (իբր Sylvanus)
- 5 Ահրանք (կիսայրեաց բա Զրպեաթ և Ահրնկէց)
- 6 Մարգրէ կամ Մարթեղ
- 7 Ասողիկ
- 8 Մի՛որ
- 9 Զապպեր (խոսվարեր)
- 10 Մուրց (յաղթանակ)
- 11 Երեզկան կամ Երեզկան. անապատակեցութիւն ըստ Զրպեաթի)
- 12 Անի

Է. Ե. Զրպետ փոսակերէն յամի 1820. — Հայկական ալխարհ, օրագիր 1868, եր. 261:

- 13 Պարիսը
- 14 Վանաս (վանասուր?)
- 15 Արամազդ
- 16 Մանի (ժազումն!)
- 17 Ասակ (անսկիզբն?)
- 18 Մասիս
- 19 Անահիտ
- 20 Արագած
- 21 Գորգոր (Գրգուռ)
- 22 Կորդի կամ Կորգուիք
- 23 Մմակ
- 24 Լուսնակ
- 25 Յրոն (կամ Սփիւռ)
- 26 Նպատ
- 27 Վահագն
- 28 Սէին? (չեանն)
- 29 Վարագ
- 30 Գիշերալար.

Եթէ այս անուանք չըլլային այլ՝ անտարա-
կոյս աւարց մէջ խարութիւն կար, իբր ու-
մանք բարի ոմանք շարագուշակ : — Օրուան և
գիշերուան քանի մի Պանք կամ բաժինք յի-
շուին առ մերայինս այլ, բայց ոչ կրօնական ա-
նուամբք, ինչպէս առ Չանդիկս. միայն Ար-
շալոյսն որ և Աշաղոսք՝ դիցաբանական թուի.
Չանդիկք այլ զայս (Ա. պահ) անուանէին Ոչա-
նիկա կամ Օշէն : — Շատ հաւանական է
որ Գիշեր (քննութեան արժանի անուն) իր ահ-
արկու մթութեամբ՝ կրօնական երեւակայու-
թիւններ և կերպարանքներ ծնուցած ըլլայ ի
միտս նախնեաց մերոց, և թերեւս անոնցմէ
է հիմայ այլ աեղ աեղ լսուածն Գիշերամուտ
կամ Գիշերամուտք :

Շատ ազգք սովորաբար երեք կամ չորս
պահ կու բաժնէին ցերեկը կամ աիւր, նոյն-
քան և գիշերը կամ ցայգը. ասոնց որոշ բա-
ժանում և անուններն նշանակուած չեն, մա-
նաւանդ որ շատ նման կամ մօտ նշանակու-
թեամբ բառեր՝ շփոթութիւն պատճառեն. իբր
կարծեօք կամ հաւանելի համարիմք Ա Պահ
սուրնջան և իրեն մասեր, Արշալոյս, Այգ
և Լուսադիւ, Աղօրաբան, Առաջօտ. Բ. Ա-
րեւոյ ժայրք. Գ. Միջօրէ կամ Հասարակ
օր. Դ. Երեկոյ. Արեւմուտք : — Գիշերոյ Ա
Պահ. Խաղաղակաւ. Յայգ. Արօտք գիշերոյ.

Բ. Գիշեր. Հասարակ կամ Խոր գիշեր. Գ. Հա-
սարա : Պահերն բնական և զործածական են
յայտնապէս, և անկարելի չէ կարծել թէ գոնէ
ոմանց ժամանակին դիցաբանական կամ աղ-
թարական զրոյց և առասպել մի յարմարուած
ըլլայ. իսկ իւրաքանչիւր մասանց պահուց, այս-
ինքն օրուան Չէ ժամուց այլ՝ մէկ մէկ նուի-
րական ոգի կամ պահապան կարգելն՝ չերեւիր
հաւանական. և սոսկ իմաստասիրի կամ իմաս-
տակի մի զրոյով հնարուած երեւին այն անուանք՝
որ յիշուած են և ի բառագիրս ինչ, և պար-
զպէս ժամուց բնական միջոցին պատշաճել
ուզած (ոչ շատ յաջող), առանց կրօնական
նշանի, և են.

Ճանք Տուրքիստան.

- Այգ
- Մայգ
- Չայրացեալ (արեւն. լաւ եւս էր. Չօրացեալ)
- Ճառագայթեալ
- Շառաւիղեալ
- Երկրասես
- Շանթակող
- Հրակաթ
- Հուր փայլեալ
- Թաղանթեալ
- Արագոտ ?
- Արփող

Ճանք Գիշերոյ.

- Խաւարակ
- Աղամուզը
- Մթացեալ
- Շաղառտ
- Կամառտ ? (Սնուցիշ! բոտ Զրպ.)
- Բաւական
- Խօթափեալ
- Գիզակ (խօնաւական ! ուրեմն Գիշակ.)
- Լուսակն կամ Լուսալայն
- Աւառտ
- Լուսափայլ
- Փայլածու :

ԳԼՈՒԽ Ե.

ՊԵՆՂԱՆԵԱՅ ՊԱՇՏՈՆ



Թէպէտ և քան զտարերս և զբուսեղէնս գերագոյն են կենդանիք, բայց ասոնց պաշտօնն աւելի ուշ եղած է: Ի՞նչ պատճառաւ կամ մանաւանդ պատճառներով, եթէ հարցնենք պէտք ըլլայ, դիմելու է նախ առ Էջփպտացիս, որ քան զամեն ազգ աւելի պաշտած կամ պատուած են մեծ ու պզտիկ կենդանի արարածներու — Ոմանք բւած են թէ Էջփպտացիք՝ իրենց դիմացկուն շինուածոց օրինակով ցուցած են՝ որ հաստատութեան մեծ քաղաքի մ'ուսնէին, և կենդանեաց վրայ տեսներով անփոփոխ բնութիւն և գործ, պատուեցին. բայց ահոնց շատ տեսակ օգուտներն այլ ի տնտեսութեան մարդկան՝ աւելի զօրաւոր որդիչ կ'ըրեւին. նոյնպէս և ոմանց գիտեցկութիւնն, ու մանց ոյժն, թոխչքն, ձայներն. նաեւ պէտպէս դիպուածք, երբեմն և անոնց փեսայն և վախն, զրեթէ ամէն հին ազգաց մէջ քիչ շատ մտուցեր են Կենդանապաշտարիւն. նոյն իսկ կենդանեաց վրայ տարած խնամքնին՝ բնաբար սէր մ'այլ կ'ազդէ, և ի սիրոյ այլ հետու չէ պատին: Մէկ մեծ պատճառ մ'այլ եղած է շատերու՝ այլանդակ կարծիք հոգեփոխութեան, կամ լաւ եւս ըսել՝ անձնափոխութեան. որպէս թէ երբեմն մարդ, այլ, կին, աղջիկ, աղայ եղողն այլ, փոխուեր՝ եղեր է անասուն կենդանի մի, չորքոտանի կամ թռչուն կամ սողուն, և այլն. և ոչ միայն մարդիկ, այլ և ամենեւնի դիցամուլ ազգաց շատուածք այլ՝ երբեմն կենդանեաց կերպարանք առած են: Դարձեալ, որ և է պատճառաւ՝ այս շատուածոց յատուկ կենդանիք նուիրած են, և յետոյ շատուածոյն հետ կամ առանձին այն կենդանիին այլ պաշտուած է:

Մեր հին ազգայնոց մէջ ի՞նչպէս և ո՞ր կենդանեաց պաշտօն մտած է. — ոչ բացայայտ է և ոչ անյայտ. վերոյգրեալ պատճառաց մէկն կամ մէկայլն ազգած է իրենց ինչպէս և այլոց: Ինչպէս շատոնց՝ այսպէս մե-

րոց այլ զլիւսուր պաշտելեաց կամ պատկառելեաց մէկն է Օձ, որ և շատ հեղ Վիշապ կ'ըսուի, աւելի մեծ, հզօր և արաւոր իմանալով. յայտ է որ իրենց փեսան, խայթ ու խածն՝ նախ զիրենք տաւրի, զգուշալի, վախնալի ըրեր է, և զուցէ զանոնք սպաննողները պատուած են, իրեւ Օձասպան և օձահաշած, բայց յետոյ վախն զօրացեր է. և փոխանակ սպաննողներու (ինչպէս Էջրակէս և Վարսազն) սպաննուածներու (օձից) ցեղն պատուած է վախով:

Յունաց մէջ ոչ միայն շատ տեսակ առուպելք և յիշատակք կան օձից, այլ և շատ տեսակ օձից և վիշապաց. ոմանք երազուիս, ոմանք եօթնազուիս, ոմանք չափէ զուր մեծ և ուժով, մարդկան և զազանաց արարիւ և կըլանող. այսպիսիք յիշուին և յառաջին գարս քրիստանէութեան, և անոնց սատակիչք՝ ոչ հին դիցազանց շահատակութեամբ, այլ նշանաւ Օ. Խաչի, և անվրա համարձակութեամբ Ս. Գեղորդներու և թէ՛նգորսներու — Մեր նախայիշեալ հրոյ և ջրոց պաշտամանց նշանաւոր երկրում այլ, (Անձեացեաց և Բուժուհեաց) ի սկզբան քարոզութեան Առաքելոց և Ս. Գրիգորի, յիշուին, « յայրս ֆարին » որջացեալ կային Վիշապք երկու, դիւացեալք » և սեւացեալք. որոց՝ աղջիկ կոյս և պատանիս անմեղօ զենուին. այնոցիկ արեամբ զուարճացեալ դեւքն. Էս ի մէջ խորանաւ ձորոյն՝ Օձք, լի թուօք մահաբերին լըջեալք » զորս սպանին Եւայի խոտուացեալ զլիստիս կակղաքայլ կուսանքն Հոփստիմեանք. բայց « Օձք մարմնաւորք քարացեալ կան մինչեւ ցայսօր », այն տեղ, կ'ըսէ պատմիչն: Այսպիսի քարացեալ օձեր մինչեւ հիմայ այլ լսուին այնպիսի տեղուանք, և նաեւ յՕձուն Գուգարաց, ի հարեւնիս մեր իմաստասէր Յովհան կաթողիկոսի, եկեղեցւոյ պատերուն վրայ: Բայց անոնց հետ հին անպաշտութեան հետք այլ մնացեր է ի սիրտ ռամկաց ոմանց, որք եթէ օձ տեսնեն իրենց ասն մէջ, փոխանակ սպաններու՝ կ'աղանչեն անոնց որ Երեւն երկման: — Օձերու վախի և առասպելաց նշանաւ կրեւն. ինչպէս, Օձտեղ ի Բարբերդ, Օձարերդ ի Գեղաբունի, Օձի գետ այնոր մօտ, Օձոն ի Զորփօր, Օձին յԱպահուհիս, Օձ-

ձոր ի Մարանդ, Օձի ի կարին, և այլն. աւելի նշանաւոր, Օձ քաղաքն որ և Վիշապաքաղաք ի Տարօն, որ կար և մեհենան Վիշապաքաղ Վահագնի: Այս մեծագոյն օձի աւուամբ այլ տեղիք կան ի կամախ, և աւելի ծանօթ՝ ի Գաբեղեանս Արարատայ, որ շատ տեսակ օձեր և վիշապներ և ուրիշ փաստակար կենդանիք քարերու մէջ պահուողէին և յայտնուէին, և տեղն այլ Գաւառաժապէ կոչուեցաւ. առոնց հալածողն եղաւ Ս. Սահակայ աշակերտն Վարոս և իւր նգնաւոր ընկերքն:

Վիշապ՝ սողորաքար մեծամեծ օձեր նշանակէ, այլ յատուկ եւս ջրային մեծ օձեր, և զուցէ անուան յետին մասն ասլ՝ ջրոյ նշանակէ և ըստ Պարօից, և նման համալուի Յունաց առտայել Հիւրայիւն, որ ի եռնեան կոչուած ընի մէջ և մօտ կենար, 7 կամ 9 կամ 50 կամ 100 գլխով, որոց մէկն թէ կտրուէր՝ իսկոյն ուրիշ մի բուսներ. բայց Հերակլ իրեն օգնական մի առաւ գնաց, ինքն նետահար կ'ըներ, միւսն իսկոյն կտրած զըլխոյն տեղը խարէր: — Հին հայկազանց ազգային դրօշն կամ նշանն էր վիշապ, և յառասպելեալ տեղեան Մարաց թագաւորին՝ մեր Տիգրան վիշապի վրայ հեծած կ'երեւէր յօրս արշաւել. անշուշտ իր վիպասանից հանձարեղ զիւսն էր այս. ի վիշապ այլաբանելով զՄարոս և իրենց բռնաւոր թագաւորն Ածղահակ, որ սատրիկ խալթող (դահիճ) իժ նշանակէ. և ըստ աւանդութեան՝ Տիգրան յաղթեց անոնց, սպաննեց զսա, և ընտանիքը շատ բազմութեամբ բերաւ բնակեցուց հին Նախճաւանի և Գողթնաց կողմերում, Երասխայ եղբրքը, որոց բնակարանն այլ Մարաց աւանք կոչուեցան. և նոյն իսկ Մար՝ օձ նշանակէ հին պարսիկ լեզուաւ: Տիգրանայ թոռին Վահագնի համար այլ երկէին Վիշապազանց հետ կուռիլը. իսկ իր Վիշապաքաղ կոչումն՝ յայտ չէ թէ զմէջ նշանակէ, եթէ վիշապէ և քաղէ կերպացեալ հրէշ մի, ինչպէս Եղեբրուաքաղն: — Տարօնոյ յիշեալ Վիշապ քաղաքն՝ ըստ առաջին պատմաց մերոց՝ ի Հնդկաց եկած զաղթականներէն այնպէս կոչուած էր, Վաղարշակայ ժամանակ, իրենց հայրենի վիշապ շատուծոյն անուամբ:

(մանաւանդ եթէ Վիշնուի հետ այլ յարնչութիւն ունի), զոր Հայք Օձ կոչեցին. և հիմայ՝ թէ և տեղն յայտնի է՝ բայց բոլորոյն տեղեալ և ջրատոյզ: — Տիգրանի օգալու վիշապն յիշեցնէ փոթորիկէ ձեւացեալ Չինամբ վիշապ հանելն. (տես յէջ 149), որոյ մղորական հաւատքը տասնուվեց զար ետքը՝ քրիստոնէութեան յառաջացեալ ժամանակ այլ (զուցէ և ինչուան հիմայ), կայր մեր առաջաց մէջ. որոց խրատեր Սարկաւազ վարդապետ ի սկիզբն ծԲ դարու, մի՛, « Առասպելական » ստութեանն ունկն դնել, և հաւատալ մի՛ » երբեք յանձն անուշուս վիշապ զնա աւանդուող »: — Սողորութիւն էր և զէրբերը վիշապաց արեան մէջ մխել, որպէս զի վէրքերնին անբժշկելի ըլլայ, զայս սովորելով վերայիշեալ Հերակլեայ բազմազուխ Հիւրայիւն արեամբ բրածէն. մեր Ա. Արշակայ նիգակն այլ այսպէս էր, կ'ըսէին, զոր քարէ արձանի մէջ զարկաւ մտուց, և պաշտելի բրաւ Պոստացոց, Գաշանց թղթոյ հրնարող հեղինակն այլ՝ Կոստանդիանոսի ձեւքով կ'ընծայէ Տրդատայ Վիշապաւնուի նիգակներ:

Մանաւատ երկրմեցուցական զրուածոց մէջ գտուի բան մի՛ « Ընդդէմ 666 ազգ » Օձից, զազանաց, սողնոց, զեռնոց՝ որ զեռան ի վերայ երկրի, որք հարկանեն և սկարացուցանեն զմարդիկ » և անուամբ այլ յիշուին շատ տեսակ օձեր, սողոյց և անսողոյց. « Իժն Սալաւարդեայ (Սալամանդր) », որ զմահաբեր զեղն ի յաջոյ ծնօան ունի »: Օձն Առգէ? որ է 12 գլխեան և 4 յիւսմեան կամ 4 կրակեան, այսինքն չորս կզակ կամ ցուակ ունեցող. Օձք՝ Ագաւատուս. Երկնահայեաց. Օձն « Լապտակալագ, որ զաւկունթ ակն ի զլուխն ունի »: — Օձն Արեգակնահայեաց. — Օձն բաշուս. — Օձն Խորիւող. — Օձն « Բըճող, որ ի հարիւր տաւ » իրն ակն մարդոյ շտեմնէ զնա, վիշապանայ, » և է 12 գլխէն և կլուսն. — Օձն Մեծ » ծախառանց, որ տասն տարի ոչ երեւի » մարդոյ, վիշապանայ » և այլն. — « Օձն Ամպտուս և Չիւնագոյն. — Իժն տրբու » մագին. — Օձն Եղջիւրատոր. — Օձն կայ » ծակնատուս. — Օձն Աւնայի, — Օձն Մար-

» մնաւեն. — Օձն Մորմկեանայեաց. — Օձն
 » Կանաւ. Օձն Դեղին. — Օձն Արուեստաւ.
 » ար. Բաշաար. Տոնաար, և այլն, և այլն:
 Երգիւնեցուցին Օձից անոնց հետ յիշեց
 նաեւ Սողուն և Զեռուն, որոց տեսակներն
 այլ յետոյ անուանէ, Պիծակ, Մեղռ, Կարիձ
 և Կոր. յեախն թէ և նոյն կարծն է, բայց
 յայսպիսի գիրս յաճախ այս անունով յիշուի,
 գուցէ և մեծութեամբ կամ ուրիշ յատկու-
 թեամբ այլ տարբերուի. ասոր համար կ'ըսէ.
 « Կորն՝ որ ելանէ ի Թիւնից սատանայի, և
 » ինքն թագաւոր է ամենայն պիղծ գեռնոց որ
 » զեռան ի վերայ երկրի և հարկանեն զմար-
 » ն զիկ և. և անոր ետեւէն շարժ Կորն,
 Մորն, Փողախէ, « Խնկն, Արիկն՝ որ ըզ-
 » մահապեղն բարձեալ ունին ի քիմն իւր...
 » Մահառդն՝ որ զմահապեղն բարձեալ ունի
 » յաղոյ կզակն իւր. — Իթիթեանդն, և այլն:
 Աստու և այսպիսեաց թղոյն այլ բոյնն այլ
 թողլով հաւատացողին, մեզի աւելի փափագելի
 էր ճանչնալ՝ ի՞նչ տեսակ միջատ կամ ճնի ըլ-
 լալնին. գոնէ բնական պատմութեան այս
 մասն՝ բան մի չահէր:

Աւելի վերագաս կենդանեաց գառնալով,
 յատուկ կարծիք և հաւատք բնծայուած զըտ-
 նեմք՝ մեր տանց ծանօթագոյն՝ և Շնորհալի
 հայրապետին յիշած՝ տիկնայց պէս յուշիկ
 քայլող և անոնց սսիկ բարձրու լրայ բազ-
 մող կատառն. իրմէ դարերով հին հայրապետն
 Յովհ. Իմաստասէր, իր Պաւլիկեանց ժամա-
 նակի շատ այլանդակ ազանդոց հետ՝ թուէ և
 « զկատուապաշտութիւն . . . կերակուր իւ-
 » րեանց զկերակրոցն ապականիչ՝ առնելոյ
 » աղագուս, » այսինքն՝ մուկերը շարդեղուն
 համար, « Մկնորտակացն լինելով պաշտօնա-
 մատոյց »: Բայց ե՛կ տես, որ այս որսացեալ
 զգուելի ամենամեծու կենդանին այլ՝ թէ ոչ
 էի պաշտօն առեալ ի Հայս, որպէս յերկու-
 րտն և առ Քրիստոսայիտ, ըստ պատմութեան
 Մ. Գրաց, կերպով մի. հեռի չէր ի մտափ
 հաւատոց, պէսպէս խորութեամբք Մկնակի
 յամանս, և Մկնարածի, այսինքն, մուկէ
 խածուած և մասամբ կերուած մաքուր նիւ-
 թոց, որոց աւելորդ խորութիւն ինչուան հի-
 մայ նշմարուի առ շատս ի ամկաց. որոյ հա-
 մար զբեր Ղազար Զահկեցի կաթողիկոսն.

« Անմտագոյնք կանայք ոմանք՝ ի տարին մի
 » օր կիրակի պահեն, և մարմնական գործ բը-
 » նաւին ոչ կատարեն, ասելով. Այսօր Մկն-
 » տօն է. եթէ մարմնական գործս ինչ առ-
 » նեմք՝ գտն Մկնուք և կարասեն զհան-
 » զերձս մեր »: Աղթարաց մէջ այլ ոչ սա-
 կաւ խորական բան գրուած կայ մկանց կերա-
 ծին և ըրածին:

Մուկէն և Մկնորտակէն վերջ կամ հետ՝
 յիշեն միտք՝ յետնոյս անարկուն և թշնամին,
 մարդու բարեկամք, Շռն. սա շատ ազգաց
 մէջ՝ մանաւանդ Եզրիպտացոց և Յունաց,
 այլեւայլ կերպարանօք և անուամբք պատուած
 և պաշտուած էր, յերկրի և յերկինն և ի
 դժոխս. հօս եռազլուի Կերքեր անուամբ. ի
 հաստատութեան երկինց՝ պայծառ աստեղօք՝
 զորս տեսաք (եր 290) և մեր Հայկին պարու
 մէջ. Իմաստասէրն (Յովհան) կատուապաշտոց
 համար կ'ըսէ, թէ այդ մոլորութեամբ՝ « յայ-
 » նոցիկ մղեալ խորխորատ որք զՁի և զՇռն
 » ընտրեցին իւրեանց լինել աստուած ».
 Բայց շուեր թէ Հայք այլ ընտրած և պաշ-
 տած կամ պատուած ըլլան. մանաւանդ որ,
 ինչպէս յիշեցինք՝ Հայկն իր թշնամիներն ա-
 նարեցելով շուս կոչեց զանոնք, ըստ ազգային
 տաւնդութեան. — Իսկ Ձիոյ նկատմամբ՝
 որ և Երիվար կուռի հայերէն, բաւական
 պատու էր՝ մեր երկրին լաւ ընտիր ցեղ մի
 ունենալն, զոր հարկի տեղ կ'ընդունէին եր-
 բեմն մեր երկրին տիրող աշխարհակալք. և
 աւելի պատիւ՝ զայն զարմանող բնիկ և ճար-
 պիկ հեծեալքն և հեծելագորք: Պատմաց և
 վիպաց մէջ յիշուած Ձիոց գոյներն (Սպի-
 տակ, Աշխետ, Ճարտուի Ճանձկեմ, Սեւան
 գեղեցիկ), քիչ մ'այլ աւելի բարձրացնեն այդ
 յիրաւի շքնաղ կենդանւոյ պատիւը. իսկ Ձիոց
 զոհն առ շատուածս կամ առ իրենց աէրն
 և հեծնալք՝ անոնց թաղման աստիւ, այլ աւ-
 ւելի բարձրացընէ ի կրօնականս. գուցէ աւ-
 ւելի եւս՝ ձիակերպ Գերեզմաններն, որք ին-
 չաւան հիմայ գտուին, նա և քրիստոնէից
 վրայ:

Այս ձեւ գերեզմանաց հետ անհրաժեշտ
 յիշուի աւելի յանախեալ Խոչակերպն, այս-
 ինքն, Ոչխարի ձեւով, որ շատ կողմերում
 կ'երեւին ի Հայս, մանաւանդ ԺՁ, ԺԷ, Գա-

րերում կանգնուածք, յայտ է թէ հետեւելով հնագունից՝ որոց տապանագիր կարգացուած չէ կամ մեզի չէ ծանուցուած։ Այս ամենապատուական կենդանին՝ որոյ դարմանն առաջին ծնած մարդու արուեստն եղած էր, (Խաշնադարմանութիւն), և շատ ազգաց մէջ յարեւելս և յարեւմուտս դեռ առաջինն է, մեր երկրին մէջ այլ ընտիր և առատ ցեղ ունի, և գլխաւոր բերքերէն մէկն է, ինչպէս յայտնի է, և Քրիստոսէ շատ զարաւ

նալ այլ վիպուած, և այն ատեններէն մինչև այժմու Քրդաց՝ օտար հովուաց այլ արօտատեղի եղած։ — Չատ ի նոյնաձեւ գերիզմանաց՝ Խոյն ուրիշ կերպով այլ նշանաւոր է ազգային մտաց և յիշատակաց մէջ։ ձեւով և յատկութեամբք, զոր յայտնեն՝ Խոյնաւ բառն՝ երազ վազելու հասնելու իմաստի՝ բայց ևս առաւել՝ ճարտարապետութեան մէջ գործածուած Խոյակ և Խոյակապ, որ և Հոյակապ, բացատրութեամբ բոլոր շինուածոյն և



Հիւս հերանոսական քանդակ ի Պայեզիտ .

առանձին մասանց, որպէս սեանց վերնախարսխին մասն, որ սեփական կնիք է յոնիական ոճոյն, բայց թուի թէ ոչ միայն ի գլուխ սեան՝ այլ և ի մէջ կամարի՝ Խոյի գլուխ դնելն ծանօթ էր Հայոց. զի և հին բազիլիք մեր Հոյակապը՝ կամարակապ թարգմանեն. որ հիմայ որ և է մեծապօրծ շինուածոյ համար կ'ըսուի։ Եւ ոչ միայն շէնքի՝ այլ և ո՛ր և է մեծազորութեան, և մեծազորող և շինարար մարդու այլ՝ Հոյանուն

կոչմամբ։ Չատնք յիշեցինք՝ Խոյից կամ Ուխարի պաշտաման հաւանականութեան համար, թողլով և նոյնանուն բնակութեան տեղիքը։ Այս կենդանւոյ մերձաօրքն այլ, Այծ, Նոխազ, Քազ, Քօշ, իրենց անունները լսեցընեն շէն և անշէն տեղեաց վրայ, և զօնբու պործածուելով, եթէ աւելի կրօնական նշան մի չկայ։ Ինչպէս ստոնցմով զուգուած կամ խառնած մտացածին կենդանեաց, Վիշապաքազ, Եղջերուաքազ, և այլն։ Յետին անունս

սոսկ կամ անխառն Եղշնորուն յառաջ բերէ, որոյ վաղելուն բազմայն Արտաշիսի յիշեցիքը (149) : Սա աւելի հաւանօրէն նուիրական կ'երեւի առ մերայինս, մանաւանդ՝ եթէ որպէս առ Յոյնս՝ իրենց Անահտայ այլ նուիրուած էր : Այժմեան Պայէզիտոյ բերդի մէջ, որ հին ատեն Հայոց ամենէն շատ պաշտաման տեղեաց կենդրոնում է, վերջ երկայ քանդակի զեռ մնացեր էր ինչուան մեր օրերս. տեսնողն կրնայ գտնել, թէ որպի որ այլաձեւեալ և առասպելեալ է այդ բազմի վրայ կեցած կենդանին (թերեւս տաճէ է գայլէ բաղադրեալ), զեռ եղջերուի էութիւնը յայտնէ. և եթէ քանդակն աւելի անմաշ մնացած ըլլար՝ այլ աւելի յայտնէր : Եթէ այդ քանդակ պատկերն էր պատուած և պաշտուած և եթէ իրեն կերպարանած շատուածը, միապէս հեթանոսական կրօնից սպաշոյց մի է : — Մեր հին պատմիչ Չնեարայ զորք մէկ օրինակի մէջ գրուի, թէ Վաղարշակ՝ ի Հնդկաց զազմած Գեմետրի և Գիսանէի բնակութեան տեղեր տուաւ ի Տարօն և յԱպահունիս, « հանդերձ դիւարնակ աշտօքն և երկարա... » ծնօտ Առարոսիս... (և նորա կանգնեցին) » կուտ ըստ պատկերին այնմիկ, զոր ի » Հնդկիս վիշապ կոչէին » . ուսկից և քաղաքն այլ վիշապ կոչեցաւ : Չգիտեմ ինչ է այդ երկարածօտ Առարոսն. վիշապ, թէ այս քանդակի վրայ երեւցող երկայնացող անասուն մի : Թողումք հետաքննաց ստուգել և նախ այդ երկբայական անունը (Առարոս), զուցէ հնդկերէն նշանակէ այս կամ այն կենդանի :

Թողումք զազաններն այլ՝ իրենց Ասիած թագաւորովն և Ինձով, որոց անուամբ տեղիք այլ կան ի Հայո, նա եւ յատուկ անուանք մարդկան որպէս և ընտանի կենդանեաց (Առիւծ, Ընձակ, Կորիւն, Եղնիկ, Յլիկ, Արջուկ, և այլն), և որք կարծիք կու տան՝ այդ կենդանեաց պատուէն առնուած՝ քան բարքէն. վասն զի նախատական պիտի ըլլար զմարդիկ այդպէս անուանել, եթէ շատ անարգ համարուէին այդ շոքրօտանիք և ոչ ազնուացեալ կարծեօք և առասպելօք : Յիշեմք միայն մէկը, որ տեսակաւ մի ընամանեաց կարգում է, և այլ տեսակաւ ի վայրենեաց. այն է վայրի խոզն՝ որ վարագ կոչուի առ

մերս, վիշարագ՝ առ Պարոս. շատ յատուկ անունանք մարդկան և յատկանիչ իրաց և ստտեղաց՝ բաւական հաւատարիք են այդ կատարդի և անճոռնի զազանին այլ կրօնական շոքրօ մ'ունենալուն. և թերեւս այս համարմամբ շամայեցին մեր երկու կրօնից միջկիտին ապրող նախնիք՝ իրենց մեծ և երեւելի՝ յետոյ և սուրբ թագաւորին այլ՝ քանի մ'օր՝ անոր կերպարանքն ընծայել, փոխանակ աւելի բարոյական այլափոխութիւնը բացատրելու : Աւելի քան գլխատուկ անուանս տեղեաց (Վարագ լեռան, Վարագարտը), և մարդկան (Վարագորդատ, Վարագպատ, Վարագապուհ, Վարագվազան, Վարագտիրոց, և այլն), նշանելի են մեծ, ընդարձակ, զօրաւոր իմաստով իրք, ինչպէս վարագաբեւ, վարագաչիղք, վարագափողոց. և այլ աւելի նշանաւոր՝ վարագազի կամ վարագնկարագի բնասակի. որոյ ձեւն՝ կըրուած գրոյն հաստաութեան ապահով նշան էր. արդօք կըրոյ տառերն յատուկ ձեւ մ'ունէին, թէ մաստնոյն վրայ վարագու կերպարանք կամ զուխ քանդակած է, չեմք կարող որոշակի ըսել. բայց ետքինն աւելի հաւանական է. զուցէ ևս աւելի՝ մաստնոյն և կըրոյն մեծութիւնը նշանակել, ինչպէս որ հիմայ այլ թագաւորք և տէրութիւնք մեծ և փոքր կնիք ունին, և մեծովն՝ մեծ խնդիրները կամ մեծերու հետ թղթակցութիւնը կըրեն : Հելլենական դիցարանութեան մէջ շատ յիշատակներ կան վարագի՝ այլեւայլ պից և դիցազանց հետ. անհրաժեշտ կ'երեւի Հայոց այլ դիցական վարագ մ'ունենալն, երբ յիշեմք որ ինչպէս Տրգատ՝ Տիրի տուրք է, Միհրգատ Միհր շատուծոյ, այսպէս վարագաբան այլ վարագի տուրք, (որպէս և ի սուրբ կրօնս մեր Աստուածատուր, Քրիստոսատուր, Խաչատուր) : Գուցէ և յիշելն Տիր և վարագ՝ շատ հեռի չըլլան իբարձէ, զի ըստ Պարսից՝ Հրատ մարդակի՝ որ է Արէս դիցարանից՝ նշանն էր վարագ. Տիր այլ, ինչպէս պիտի տեսնեմք յետոյ՝ զպարթեան շատուած էր, ոչ անմասն յ'արութեանէ :

(Դարայարնի)

